

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԵԼՔՈՆՅԱՆ ԷԴՈՒՄԱՐԴ ԿՈՆՈՐՅԱՅԻ

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՈՒՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ Մ.Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՍԵՋ

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ – 2011

Անունախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Կարապետյան Ս. Ս.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Սարուխանյան Ն. Բ.

պատմական գիտությունների թեկնածու,  
դոցենտ Հովհաննիսյան Պ. Հ.

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2011 թ. սեպտեմբերի 30-ին, ժամը 14<sup>00</sup>-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՂ-ի 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղդասյան 24/4):

Անունախոսյալը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011 թ. հուլիսի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Հ. Ղ.

## ԱՏԵՆԱԽՈՒՄԻ ԲԱՆԴԱՆՈՒ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման և Հայոց ցեղասպանության պատմության հիմնահարցերը կարևորագույն տեղ են զբաղում մեր ժողովրդի բազմադարյան պատմության մեջ և մշտապես գտնվել են ինչպես հասարակական-քաղաքական մտքի, այնպես էլ պատմագիտության ուշադրության կենտրոնում:

Ատենախոսությունը նվիրված է հայագիտության երախտավորներից մեկի՝ ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի պատմագիտական ժառանգության և արդիականությանը համահունչ վերոհիշյալ հիմնախնդիրների համակողմանի լուսարանմանը:

### ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր աշխարհաքաղաքական բազում տեղաշարժերի պայմաններում առավել քան կարևոր է ճիշտ կողմնորոշվել անմաքաբոյ իրավիճակներում, անցյալի սխալներից խուսափելու և պատմության դասերը հաշվի առնելու ակնկալությամբ, կարողանալ ճիշտ ըմբռնել կատարվածը և օգուտ քաղել այդ ժառանգությունից:

Մ. Ներսիսյանի պատմագիտական ժառանգության բաղադրիչներն են հայ ազգային-ազատագրական շարժման, Հայոց ցեղասպանության պատմության, Հայկական հարցի և հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների ուսումնասիրությունը: Վերջինս գիտատեսական այժմեական նշանակություն և հնչեղություն է ստանում վատակաշատ պատմաբանի աշխատություններում: Համաժողովրդական բնույթ կրող հայության ռուսական կողմնորոշումը Մ. Ներսիսյանի պատմագիտական հայեցակարգում ստանում է ռեալ իրադրությունների ճիշտ գնահատման և ազգային շահերը գիտակցող առողջ մտածողության արդյունք: Նրա ուսումնասիրությունների հիմնական առանցքը պտտվել է երկու հիմնական հարցի՝ հայ-ռուսական և հայ-թուրքական հարաբերությունների շուրջ, որոնք որոշիչ դեր են ունեցել մեր ժողովրդի պատմության մեջ: Դրանք էական հանգամանքներ են, որոնք խոր ազդեցություն են թողել ազատագրական շարժման վրա:

Պատմական ճակատագրի բերումով և կյանքի թելադրանքով դրանք այժմ էլ դարձել են օրակարգի հիմնահարցեր, գիտակցելու համար այսօրվա և վաղվա պահանջները: Դրանց գիտական ճիշտ վերլուծությունը, ինչին մեծ նշանակություն էր տալիս հենց ինքը՝ պատմաբանը, համահունչ է նաև այսօրվա պատմա-քաղաքական իրադարձություններին, դառնալով այն անկյունաքարերից մեկը, որի վրա կարող է խարսխվել և առաջնորդվել հայ դիվանագիտական միտքն ու մեր պետական այրերի հետագա զործունեությունը: Մ. Ներսիսյանն իր դիրքորոշմամբ ձգտում էր լսելի դարձնել նրանց՝ արտաքին քաղաքականության մեջ առավել չափով լինել հավասարակշիռ և ոչ ծայրահեղ, զերծ մնալ վնասակար որդեգրումներից: Յուրաքանչյուրի պարտքն է ճիշտ կողմնորոշվել ստեղծված բարդ իրավիճակներում, օգուտ քաղել պատմագիտական այն ժառանգությունից, որը կարող է ուղենիշ դառնալ հետագա զործունեության համար, դիմելով անցյալի փորձին՝ կարողանալ տեղին և ժամանակին հակահարված տալ պատմության կեղծարարներին և նրանց կամակատարներին:

## ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Խորհրդայնայ պատմագիտության մեջ XIX դարի երկրորդ կեսի ազգային-ազատագրական շարժման և Հայոց ցեղասպանության պատմության վերհանման ու գիտական հետազոտության առաջնելը Մ. Ներսիսյանն է: Ուսումնասիրության նպատակներից է այդ խնդիրների առնչությամբ առաջինը համարձակորեն բարձրաձայնող հեղինակի ուսանելի փորձի վերհանումն ըստ իր իսկ՝ ներսիսյանական վերլուծությունների, այն է՝ արևմտահայության սրտաբուխ ազգային-ազատագրական շարժումը սովետոլ և Հայոց ցեղասպանության անհերքելի փաստը ժխտող պատմության կեղծարարների քողագերծումը: Այդ կեղծիքները բխում են գլխավորապես թուրքական պատմագիտությունից, որը նենգափոխում է հայ-թուրքական հարաբերությունների պատմությունը և չարանտորեն զրպարում հայ ժողովրդին, փորձում ապացուցել, որ իբր հայերը զուրկ են եղել սեփական պետականությունից և միշտ գտնվել են օտար պետությունների տիրապետության տակ: Գիտական անբարեխղճությամբ և հավատարիմ իրենց ազգայնամոլական էությանը, թուրք պատմաբանները բազմիցս կրկնում են այն հայտնի առասպելը, թե իբր հայերը «օսմանյան պայծառ, վառվառն ու հեքիաթային աշխարհում» ունեցել են բարեկեցիկ կյանք: Նրանք շրջանցում կան արհամարհում են հայ ժողովրդի մեծ ողբերգությանը նվիրված բազմաթիվ գիտական ուսումնասիրությունները: Փորձել ենք Մ. Ներսիսյանի լայնախոհ և ինքնատիպ հանգուցալուծումները, պատմության կեղծարարներին տրված տեղին ու անվիշտ գնահատականները և ուսանելի փորձը դարձնել պատգամ-ուղենիշ գալիք սերունդների համար:

Ատենախոսության մեջ լուսաբանվում են՝ 1) Մ. Ներսիսյանի՝ որպես հայրենասեր պատմաբանի, հասարակական գործչի, գիտնականի կյանքն ու գործունեությունը, 2) նրա ավանդը հայ ազգային-ազատագրական շարժման պատմության ուսումնասիրության բնագավառում, 3) նրա ներդրումը Հայոց ցեղասպանության պատմության լուսաբանման ոլորտում, 4) նշված երկու հիմնահարցերի վերաբերյալ թուրք կեղծարարների հակապատմական թեզերի մերկացումը:

## ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԻՐԸ ԵՎ ԳՈՐԾԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ համեստ փորձ է կատարվում գիտականորեն ուսումնասիրելու և ըստ արժանվույն ներկայացնելու ակադեմիկոս Մ. Ներսիսյանի պատմագիտական ժառանգությունը վերը նշված հիմնախնդիրների ուսումնասիրության բնագավառում: Այն իր մեջ ներառել է նրա կյանքի ու գործունեության հարուստ փորձը, ժամանակակիցների հուշերում ուրվագծված ջխտող կերպարը, միշտ արդիական ու հրատապ, հայագիտությանը հետաքրքրող և մեծ նշանակություն ունեցող հայ ազգային-ազատագրական շարժման և Հայոց ցեղասպանության պատմության հիմնախնդիրների շուրջ պատմաբանի ուրույն մեկնաբանություններն ու եզրահանգումները:

Մ. Ներսիսյանի գիտական գործունեության անաչառ ուսումնասիրությունն ունի գիտատեսական ու գործնական կարևոր նշանակություն: Նրա խոհերի բարձրաձայնումը կարևոր է նաև մեր օրերի հասարակական-քաղաքական

ուժերի համար: Իր ժողովրդի ճակատագրով մտահոգված պատմաբանի ուղենիշ-ծրագրերը, հայրենասիրական շնչով զրկված նրա աշխատությունները պետք է դառնան յուրաքանչյուրի սեփականությունը:

#### **ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԺՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

Առենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի խորհրդի նիստում:

Աշխատանքը քննարկել և իրապարակային պաշտպանության է երաշխավորել նույն համալսարանի հայոց պատմության ամբիոնը:

Առենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումներն արտացոլված են հեղինակի իրատարակած հոդվածներում, որոնք լույս են տեսել հանրապետության գիտական պարբերականներում: Առենախոսը զեկուցումով հանդես է եկել ակադեմիկոս Մ. Ներսիսյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտական նստաշրջանում, համահեղինակ է XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման խորհրդահայ և Հայոց Մեծ Եղեռնի պատմության պատմագրությանը նվիրված մենագրությունների<sup>1</sup>:

#### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԵՐԸ**

Առենախոսությունը շարադրված է արխիվային վավերագրերի, փաստաթղթերի, մամուլի նյութերի, պատմագիտական գրականության քննական հետազոտության և պատմահամեմատական ուսումնասիրության մեթոդաբանությամբ: Ուսումնասիրվող խնդիրները դիտարկվել են փաստագրական նյութերի վերլուծական քննության հիման վրա: Հիմնահարցը հետազոտելիս հիմք է ընդունվել պատմական ճշմարտությունը, անաչառությունը և անկողմնակալությունը:

#### **ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ**

Հայ ազգային-ազատագրական շարժման և Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության գործում մնայուն են Մ. Ներսիսյանի ծառայությունները: Նրա պատմագիտական ժառանգության վերհանունը ավելի է արժևորում այդ հիմնահարցերի ուսումնասիրվածության աստիճանն ու կարևորությունը:

Առենախոսության շարադրանքի ընթացքում օգտագործվել են Հայաստանի Ազգային արխիվում պահպանվող Մ. Ներսիսյանի անձնական արխիվի հարուստ նյութերը (ֆոնդ 818): Նրա անձնական փաստաթղթերը, որոնց թերթերի քանակը հասնում է շուրջ 135.000-ի, իրենց մեջ ներառում են իրատարակված աշխատությունների, դասազրբերի, ժողովածուների, հոդվածների ձեռագրեր, գրախոսություններ, հարցազրույցներ, գրառումներ, ելույթներ, զեկուցումներ, դասախոսություններ, նամակներ, կենսագրական բնույթի փաստաթղթեր: Դրանք ունեն գիտական և արքյուրագիտական մեծ նշանակություն հայ ժողովրդի պատմության համապատասխան ժամանակաշրջանն ուսումնասիրող

<sup>1</sup> Կարապետյան Մ., Գևորգյան Է., Սեյրոնյան Է., XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման խորհրդահայ պատմագրությունը (1921-1991 թթ.), Երևան, 2010: Կարապետյան Մ., Գևորգյան Է., Սեյրոնյան Է., Աբգարյան Ա., Հայոց Մեծ Եղեռնի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, 2010:

պատմաբանների համար և համակողմանիորեն ներկայացնում են անվանի պատմաբանին, հասարակական գործչին, քաղաքացուն<sup>2</sup>:

Ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն փաստաթղթերի և նյութերի մի շարք ժողովածուները<sup>3</sup> և մատենագիտական բնույթի գրականությունը<sup>4</sup>, ինչպես նաև օտարազգի ժամանակակիցների՝ Յ.

<sup>2</sup> Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 818, ց. 1, գ. 5, 6, 7, 9, 23, 36, 62, 66, 73, 110, 111, 112, 113, 114, 115, 116, 117, 118, 119, 120, 121, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 129, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 164, 193, 194, 195, 196, 197, 198, 199, 200, 234, 238, 242, 247, 248, 250, 251, 252, 253, 254, 255, 256, 271, 272, 273, 274, 275, 276, 277, 278, 279, 280, 281, 315, 332, 335, 339, 340, 343, 344, 345, 346, 347, 349, 350, 385, 386, 403, 431, 434, 504, 597, 598, 620, 621, 636, 638, 641, 642, 647, 648, 650, 651, 652, 754, 770, 771, 772, 773, 777, 781, 798, 830, 846, 961, 962, 965:

<sup>3</sup> Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, 1896.

Братская помощь пострадавшим в Турции армянам, Москва, 1897.

Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под ред. М. Нерсисяна. Сост.: М. Нерсисян, Р. Саакян. Ереван, 1966.

Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923): Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ: Կազմ.՝ Ջ. Կիրակոսյան, Ռ. Ասիական, Երևան, 1972:

Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под ред. М. Нерсисяна. 2-ое доп. издание. Сост.: М. Нерсисян, Р. Саакян. Ереван, 1982.

Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Փախազյանի, Երևան, 1988:

Ստղծոնն թեղեղյանի դատավարությունը: Աղագրություն, Երևան, 1990:

Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Ա. Ներսիսյանի խմբագրությամբ: Կազմ.՝ Ա. Ներսիսյան, Ռ. Ասիական, Երևան, 1991:

Германские источники о геноциде армян. Период первой мировой войны (Сборник документов и материалов. В 2-х томах). Сост.: С. Степанян, Н. Багдасарян. Под ред. С. Степаняна, т.1. Ереван, 1991.

Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы Политического архива министерства иностранных дел Кайзеровской Германии. Сборник. Сост., ответ редактор В. Микаэлян. Ереван, 1995.

Русские источники о геноциде армян в Османской империи 1915-1916 годы. Сост.: Г. Абраамян, Т. Севан-Хачатрян. Предисловие М. Нерсисяна. Ереван, 1995.

Հայերի ցեղասպանությունը թուրքիայում բուլղարական դիվանագիտական փաստաթղթերի լուսի ներքո: Կազմող՝ Յ. Կիրակոսյան: Ժողովածուն բուլղարերենից թարգմանեցին՝ Ջ. Պասաթյան, Կ. Երնզոյան, Երևան, 1996:

<sup>4</sup> Բարաքանյան Ռ., Սյրտիչ Գեղամի Ներսիսյան, Կենսամատենագիտություն: Ներածականը Գ. Գալոսյանի և Յ. Ավետիսյանի, Երևան, 1983: Բարաքանյան Ռ., Դերոյան Ե., Ակադեմիկոս Ա. Ներսիսյանի աշխատությունների մատենագիտություն, «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲԳ), 1999, № 1, էջ 22-47: Հայերի ցեղասպանությունը (Սեօ եղեռնի 75-ամյակի առթիվ): Գրականության մատենագիտական ցանկ, Երևան, 1990: Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մեջ (1894-1923): Մատենագիտություն: Կազմ.՝ Ա. Հարությունյան, Գ. Սյրտիսյան, Հասարակական գիտությունների ինֆորմացիոն կենտրոն, Երևան, 1993: Հայոց 1915-1916 թթ. ցեղասպանությունը: Մատենագիտություն: Խմբ.՝ Ա. Ներսիսյան, Կազմ.՝ Ռ. Բարաքանյան, Ե. Դերոյան, Ա. Կարապետյան, Ա. Գովհաննիսյան, Երևան, 1995: Ակադեմիկոս Սյրտիչ Ներսիսյան Տալազի աշխատությունների մատենագիտություն: Կազմ.՝ Ե. Դերոյան, խմբ.՝ Պ. Սուրբաթյան, Երևան, 2004:

Մորգենթաուի, Յ. Լեփսիուսի, Ֆ. Նանսենի, Յ. Բարբիի, Յ. Ֆիրբյուխտերի և այլոց աշխատությունները<sup>5</sup>:

Անտեպոսությունը չարադրելիս հինք են հանդիսացել Մ. Ներսիսյանի աշխատություններն ու հոդվածները խնդրո առարկա հիմնահարցերի վերաբերյալ<sup>6</sup>:

<sup>5</sup> Մորգենթաու Յ., Ամերիկյան դեսպան Քենդի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները Թարգմանիչ՝ Ենոկ Արմեն, Ֆաբա. Իրատ., Երևան, 1990: Լեփսիուս Յ., Գալտոնի տեղեկագիր տոքթ. Եօհաննես Լեփսիուսի, Հայաստանի ջարդերը: Թարգմանեց՝ Մ. Շանտանճեան, Կ. Պղիս, 1919: Նանսեն Ֆ., Հայաստանը և Սերնալոր Արևելքը, Երևան, 1993: Henry Barby, Au Pays de L'Epouvanter: L'Armenie Martyre. Preface de M Paul Deschanel, Paris, 1917: Ֆիրբյուխտեր Յ., Հայաստան 1915. գերմանացի ապայի վկայությունը, Երևան, 1995 և այլն:

<sup>6</sup> Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Երևան, 1955: Նույնի՝ Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., Երևան, 2002: Նույնի՝ Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, Երևան, 1982: Նույնի՝ Պատմության կեղծարարները, Երևան, 1998: Նույնի՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, 2005: Նույնի՝ Հայաստանի տնտեսական և քաղաքական դրությունը 1860-1880 թթ., ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1946, № 10, էջ 33-59: Նույնի՝ Հայ ժողովրդի պատմություն (1900-1917 թթ.), ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 5, էջ 3-63: Նույնի՝ Հայ ժողովրդի պատմություն (1850-1890 թթ.), ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 6, էջ 3-48: Նույնի՝ Չեթուրնի 1862 թվականի ապստամբությունը, ՊԲՀ, 1962, № 4, էջ 59-68: Նույնի՝ ժողովրդական հերոսը (Չորակար Անդրանիկի ծննդյան 100-ամյակի առթիվ), «Սովետական Հայաստան», 1965, 25 փետրվարի, № 46: Նույնի՝ Ելուքեր հայկական կոտորածների մասին (Մեծ եղեռնի 50-ամյակի առթիվ), ՊԲՀ, 1965, № 1, էջ 85-100: Նույնի՝ Генцид западных армян в 1915 году (К 50-летию геноцида армян) «Историко-филологический журнал» (այսուհետև՝ ИФЖ), 1965, № 2, с. 55-60. Նույնի՝ Генцид тюркчаше преступление перед человечеством, «Правда», 1965, 24 апреля, № 114-115 (совместно Н. Ушаков). Նույնի՝ Գեցնցիղը ամենածանր հանցագործությունն է՝ մարդկության հանդեպ (հեղինակակից Լ. Ուշակով), «Սովետական Հայաստան», 1965, 25 ապրիլի, № 97: Նույնի՝ Պայքարի և վերածնության ուղիներով (Մեծ եղեռնի 60-ամյակի առթիվ), ՊԲՀ, 1975, № 2, էջ 73-78: Նույնի՝ Материалы о генерале Андранике, ИФЖ, 1981, № 4, с. 242-248 (совместно с А. Арутюняном и Д. Мурадяном). Նույնի՝ Հայ ազգային-ազատագրական շարժումը օսմանյան բռնապետության դեմ և պատմության կեղծարարները, ՊԲՀ, 1984, № 3, էջ 7-20: Նույնի՝ Արևմտահայության ցեղասպանությունը 1915 թվականին (Մեծ եղեռնի 70-ամյակի առթիվ), ՊԲՀ, 1985, № 2, էջ 21-32: Նույնի՝ Սիջազգային հասարակական կարծիքը արևմտահայության ցեղասպանության մասին (հեղինակակից՝ Ա. Խառատյան), ՊԲՀ, 1986, № 1, էջ 71-84: Նույնի՝ Невежкие и тупеющие источники о геноциде западных армян, ИФЖ, 1986, № 2, с. 31-40. Նույնի՝ Հայ ազատագրական շարժումը և հնչյունները 1880-1890-ական թվականներին (Հնչյունյան կուսակցության հիմնադրման 100-ամյակի առթիվ), ՊԲՀ, 1987, № 3, էջ 25-33: Նույնի՝ Անհերքելի փաստաթղթեր արևմտահայության ցեղասպանության մասին, «Սովետական Հայաստան» ամսագիր, 1987, № 3, էջ 10-12: Նույնի՝ Օսմանյան պետության քաղաքակրթական միսիայի» մասին, «Սովետական Հայաստան» ամսագիր, 1987, № 12, էջ 30-33: Նույնի՝ ժողովրդական հերոսը (Անդրանիկ Օզանյան-125), «Լեւինյան ուղիով», 1990, № 2, էջ 78-82: Հարցազրույց Մ. Ներսիսյանի հետ՝ ՊԲՀ, 1990, № 4, էջ 175-184: Նույնի՝ Неопровержимые документы, «Коммунизм», 1990, 24 апреля, № 92. Նույնի՝ Հայկական հարցի և հայ կամախորհրդերի մասին (1912-1915 թթ.), ՊԲՀ, 1991, № 2, էջ 205-215: Նույնի՝ Հայկական հարցի արծարծումը 1912 թվականին, ՊԲՀ, 1992, № 1, էջ 197-214: Նույնի՝ Սի բանավեճ Ջնյունմիայի 1922 թվականի ողբերգության մասին (Ջնյունմիայի հայ և հույն բնակչության ջարդերի 70-ամյակի առթիվ), ՊԲՀ, 1992, № 2-3, էջ 87-92: Նույնի՝ Խրիմյան Հայրիկի դիմումը Նիկոլայ Երկրորդին (1907) և արխիվային այլ նյութեր Հայկական հարցի ու հայ կամախորհրդական շարժման մասին (1912-1915 թթ.), ՊԲՀ, 1993,

Թեմայի գիտական լուսաբանման համար կարևոր նշանակություն ունեն պատմագիտության դրկտոր, պրոֆեսոր Սիեր Կարապետյանի աշխատությունները, որոնցում հեղինակը որոշակիորեն արժևորել է Մ. Ներսիսյանի գիտական ժառանգությունը<sup>7</sup>:

№1-2, էջ 165-180: Նույնի՝ Հայ ժողովրդի մեծ ողբերգությունը. Հայերի ցեղասպանության 80 տարին, ՊԲՀ, 1995, № 1, էջ 7-18: Նույնի՝ Գրախոս. Անդրանիկ Չելեպյան. Ջորալար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, ՊԲՀ, 1995, № 1, էջ 233-235: Նույնի՝ Արևմտահայերի 1915-1916 թթ. ցեղասպանության պատմության մի քանի հարցերի շուրջը, ՊԲՀ, 1995, № 2, էջ 11-20: Նույնի՝ Մեծ եղեռնի ութսուն տարին, ՀՀ ԳԱԱ «Լրագրեր հաս. գիտ.», 1995, № 1, էջ 8-18: Նույնի՝ Геноцид западных армян по немыслим и чудовищам историкам «1915 թ. Հայոց ցեղասպանությունը պատմության և պատմագրության հարցեր»: Հոլլանդների ժողովածու: Պատասխանատու խմբագիր՝ Ռուբեն Սաֆրաստյան երևան, 1995, էջ 7-20: Նույնի՝ Քսանդրոզ դարի առաջին ցեղասպանությունը «Գիտություն», 1996, 24 սպրիլի, №7, էջ 3-4: Նույնի՝ Չեթուհցիների 1895-1896 թթ. ինքնապաշտպանական հերոսամարտը, ՊԲՀ, 1996, №1-2, էջ 7-16: Նույնի՝ Ինչու՞ արդարացել է անբաստանյալը (Սողոմոն Թեկիրյանի ծննդյան 100-ամյակի առթիվ), ՊԲՀ, 1996, № 1-2, էջ 17-24: Նույնի՝ Արևմտահայերի կոտորածները և ռուս մտավորականությունը 1894-1896 թվականներին, ՊԲՀ, 1997, № 1, էջ 15-24: Նույնի՝ Օսմանյան պետության «քաղաքակրթական միսիայի» մասին, ՊԲՀ, 1997, № 2, էջ 41-58: Նույնի՝ Նորից օսմանյան պետության մասին «Հայաստանի Հանրապետություն», 1997, 10 հոկտեմբերի, № 196: Նույնի՝ Պատմական մեծ իրադարձություն (Ռուսաստանի դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև 1997 թ. օգոստոսի 29-ին Մոսկվայում կնքված «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագրի» մասին), «Հայաստան», 1997, 13 դեկտեմբերի, № 116: Նույնի՝ Օսմանյան պետության «քաղաքակրթական միսիայի» մասին (չարունակություն), ՊԲՀ, 1998, № 1-2, էջ 27-44: Նույնի՝ Թեմայական զորքերի բարբարոսությունները Արևելյան Հայաստանում 1920 թ. վերջին և 1921 թ. սկզբներին, ՊԲՀ, 1998, № 1-2, էջ 247-256: Նույնի՝ Մուսաֆա Թեմալ փառչան արևմտահայության 1915-1916 թթ. ցեղասպանության մասին, ՊԲՀ, 1998, № 3, էջ 23-26: Նույնի՝ Հայկական հարցի ծագումը և մեծ տեղությունները, ՊԲՀ, 1999, №1, էջ 101-108:

<sup>7</sup> Կարապետյան Մ., XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման պատմագրությունից, երևան, 1987: Նույնի՝ Հայոց Մեծ եղեռնը պատմագրության մեջ, երևան, 1993: Նույնի՝ Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ, երևան, 1998: Նույնի՝ Հայաստանը 1912-1920 թվականներին: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, երևան, 2003: Նույնի՝ Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հիմնահարցերը հետխորհրդային հայ պատմագրության մեջ, երևան, 2005: Կարապետյան Մ., Գևորգյան Է., XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման հիմնահարցերը մինչխորհրդային հայ պատմագրության մեջ, երևան, 2008: Կարապետյան Մ., Գևորգյան Է., Մելքոնյան Է., XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման խորհրդակալ պատմագրությունը (1921-1991 թթ.), երևան, 2010: Կարապետյան Մ., Գևորգյան Է., Մելքոնյան Է., Արզալյան Ա., Հայոց Մեծ եղեռնի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, երևան, 2010: Կարապետյան Մ., Հայոց պատմագիտության նախաբերը (Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի ծննդյան 85-ամյակի առթիվ), «Հայաստան», 1995, 14 նոյեմբերի, № 112, «Արարատ», Բեյրութ, 1995, 10 դեկտեմբերի, № 20: Նույնի՝ Նոր աշխատություն պատմության կեղծարարների դեմ (Գրախոս. Մ. Ներսիսյան, Պատմության կեղծարարները, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատ., 1998, 343 էջ), «Հայաստանի Հանրապետություն», 1999, 30 հունվարի, № 18: Նույնի՝ Գրախոս. Մ. Ներսիսյան, Պատմության կեղծարարները, ՀՀ ԳԱԱ «Լրագրեր հաս. գիտ.», 2000, № 1, էջ 222-225: Նույնի՝ Գիտնականը, քաղաքացին, հասարակական գործիչը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մ. Ներսիսյանի ծննդյան 95-ամյակի առթիվ), ՊԲՀ, 2005, № 3, էջ 3-8: Նույնի՝ Գրախոս. Մ. Ներսիսյան, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատ., երևան, 2005, 336 էջ, «Բանբեր Հայաստանի արվիվները», 2005, №2, էջ 255-258:



Օգտագործվել են Մ. Ներսիսյանի մասին գրված բազմաթիվ հոդվածներ, երախտագետ ժամանակակիցների հիշողություններ, որոնցում կան որոշակի անդրադարձներ, ինչպես նաև նրա աշխատությունների մասին գրախոսություններ, հոբեյանական բազմաթիվ հոդվածներ:

Պատմաբանի կյանքի և գործունեության, գիտական ժառանգության առանձին կողմերին անդրադարձել են Լ. Ազատյանը<sup>8</sup>, Գ. Ասատրյանը<sup>9</sup>, Լ. Բարեյանը<sup>10</sup>, Վ. Բարխուդարյանը<sup>11</sup>, Գ. Գալոյանը և Յ. Ավետիսյանը<sup>12</sup>, Ն. Ղերոյանը և Պ. Չոբանյանը<sup>13</sup>, Յ. Ինճիկյանը<sup>14</sup>, Ա. Խառատյանը<sup>15</sup>, Է. Կոստանոյանը<sup>16</sup>, Ս. Հախումյանը<sup>17</sup>, Թ. Հակոբյանը<sup>18</sup>, Վ. Համազասպյանը<sup>19</sup>, Ա. Հանքարյանը<sup>20</sup>, Կ. Հարությունյանը և Մ. Սահակյանը<sup>21</sup>, Վ. Ղազարեցյանը և Վ.

<sup>8</sup> Ազատյան Լ., Հայ որբերը մեծ եղեռնի, գիրք երրորդ, Լոս Անճելես, 2002 («Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի մասին, Մ. Ներսիսյանի խնրագրությամբ, Երևան, 1991, 758 էջ), էջ 197:

<sup>9</sup> Ասատրյան Գ., Ակադ. Սկրտիչ Ներսիսյան-85, «Իրան-Ճամե», 1995, №6 - 1996, №1, էջ 13:

<sup>10</sup> Բարեյան Լ., Ակադեմիկոս Մ.Ներսիսյանի 60-ամյակը, «Քանթեր Երևանի համալսարանի», 1970, №3, էջ 247-249:

<sup>11</sup> Բարխուդարյան Վ., Ականավոր գիտնականն ու հասարակական գործիչը (Մ. Ներսիսյանի ծննդյան 60-ամյակի առթիվ), «Սովետական Հայաստան», 1970, 26 նոյեմբերի, № 276: Նույնի՝ Ներսիսյան Սկրտիչ Գեղամի, ՀՍՍՀ, հ. 8, 1982, էջ 259-260: Նույնի՝ Սկրտիչ Գեղամի Ներսիսյան (Գիտնականն ու հասարակական գործիչը), ՊԲՀ, 1999, №1, էջ 7-21:

<sup>12</sup> Գալոյան Գ., Ավետիսյան Յ., Ականավոր գիտնականն ու հասարակական գործիչը (ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Ներսիսյանի ծննդյան 70-ամյակի առթիվ), «Սովետական Հայաստան», 1980, 4 դեկտեմբերի, № 283:

<sup>13</sup> Ղերոյան Ն., Չոբանյան Պ., Նամակներ Մ.Ներսիսյանի անձնական արխիվից, ՊԲՀ, 2003, №1, էջ 274-286:

<sup>14</sup> Ինճիկյան Յ., Ղարի առաջին ցեղասպանությունը (Գրախոս. Генциал армян в Османской империи. Сборник документов и материалов. Под ред. М. Нерсисяна, 2-ое доп. изд. Состав: М. Нерсисян, Р. Саакян. Ереван, 1982), «Սովետական Հայաստան», 1983, 1 մարտի, №50:

<sup>15</sup> Խառատյան Ա., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի հիմնահարցը ակադեմիկոս Մ. Ներսիսյանի գնահատմամբ, ՊԲՀ, 1999, № 1, էջ 81-94: Նույնի՝ Համարձակ և սկզբունքային գիտնականը, «Վեմ», 2010, №4, էջ 152-158:

<sup>16</sup> Կոստանոյան Է., Անվանի պատմաբանը և հասարակական գործիչը (Ակադ. Մ. Ներսիսյանի ծննդյան 85-ամյակի առթիվ), «Հանդես Երևանի համալսարանի», 1995, №3, էջ 23-27:

<sup>17</sup> Ахумян С., Думыо былом, Ереван, 2002, с. 139-144.

<sup>18</sup> Հակոբյան Թ., ճանաչված գիտնականն ու հասարակական գործիչը (Մ. Ներսիսյանի ծննդյան 60-ամյակի առթիվ), «Երևանի համալսարան», 1970, №8, էջ 53-54:

<sup>19</sup> Համազասպյան Վ., Արժեքավոր մեծագրություն հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության վերաբերյալ (Գրախոս. Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Երևան, 1955, 531 էջ), «Սովետական Հայաստան», 1955, 19 հոկտեմբերի:

<sup>20</sup> Հանքարյան Ա., Վաստակաշատ պատմաբանի հոդվածների ընտրանին (Գրախոս. Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, Երևան, 1982, 405 էջ), «Հայրենիքի ձայն», 1984, 31 հոկտեմբերի, №44: Նույնի՝ Անվանի գիտնականն ու հասարակական գործիչը, «Ազգ», 1995, 17 նոյեմբերի, №222, էջ 4:

<sup>21</sup> Հարությունյան Վ., Սահակյան Մ., Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի. Սկրտիչ Գեղամի Ներսիսյան, Երևան, 1988, էջ 239-242:

Ոսկանյանը<sup>22</sup>, Ռ. Ղազանյանը<sup>23</sup>, Վ Միքայելյանը<sup>24</sup>, Պ. Մուրադյանը<sup>25</sup>, Վ Ոսկանյանը<sup>26</sup>, Հ. Չաքրյանը<sup>27</sup>, Պ. Չոբանյանը<sup>28</sup>, Վ Պողոսյանը<sup>29</sup>, Ռ. Սահակյանը<sup>30</sup>, Ֆ. Սարգսյանը<sup>31</sup>, Ն. Սարուխանյանը<sup>32</sup>, Ս. Ստեփանյանը<sup>33</sup>, Ն. Վարդանյանը (Ն. Դերոյան)՝<sup>34</sup> և ուրիշներ:

<sup>22</sup> Ղազարյան Վ., Ոսկանյան Վ., Մ.Ներսիսյան (Ծննդյան 70-ամյակի առթիվ), ՊԲՀ, 1980, №4, էջ 269-272:

<sup>23</sup> Ղազանյան Ռ., Ականավոր գիտնականը, «Սովետական դպրոց», 1966, 8 հունիսի:

<sup>24</sup> Միքայելյան Վ., Պատմագիտական արժեքավոր աշխատություն (Գրախոս. Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը բյուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Երևան, 1955, 531 էջ), «Սովետական գրականություն», 1956, № 1, էջ 162-166: Նույնի՝ Սկրտիչ Ներսիսյան (Ծննդյան 75-ամյակի առթիվ), «Լրագրեր հաս. գիտ.», 1985, № 12, էջ 75-78:

<sup>25</sup> Մուրադյան Պ., Պատմաբանի վաստակը, «Հայրենիքի ծայն», 1981, 14 հունվարի, № 3, էջ 6: Նույնի՝ «Պատմա-բանասիրական հանդեսի» հիմնադիր խմբագիրը, ՊԲՀ, 1999, № 1, էջ 62-66:

<sup>26</sup> Ոսկանյան Վ., Գիտնականն ու քաղաքացին (Մ. Ներսիսյանի ծննդյան 60-ամյակի առթիվ), «Լրագրեր հաս. գիտ.», 1970, № 10, էջ 108-113:

<sup>27</sup> Չաքրյան Հ., Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի աշխատությունն անվիճելիորեն բարձր որակ է հայ պատմագրության մեջ (Գրախոս. Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը բյուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2002, 492 էջ), «Ազգ», 2002, 27 դեկտեմբերի, № 239:

<sup>28</sup> Չոբանյան Պ., Հայ ժողովրդի արտաքին կողմնորոշումների գնահատության հարցը Մ. Ներսիսյանի աշխատություններում, ՊԲՀ, 1999, № 1, էջ 73-80:

<sup>29</sup> Պողոսյան Վ., Գրախոս. Генциал армян в Османской империи (Сборник документов и материалов. Под ред. М. Нерсисяна, 2-ое доп. издание. Сост.: М. Нерсисян, Р. Саакян, Ереван, 1982), «Բանբեր Հայաստանի արխիվների», 1984, № 2, էջ 209-214: Նույնի՝ Պատմաբանը, գիտության կազմակերպիչը, քաղաքացին, ՊԲՀ, 1999, № 1, էջ 67-72: Նույնի՝ Գրախոս. Սկրտիչ Ներսիսյան, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2005, 336 էջ, ՊԲՀ, 2005, № 2, էջ 307-311: Նույնի՝ «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի լույսընծայման նախապատմության շուրջ (Ակադեմիկոս Սկրտիչ Ներսիսյանի ծննդյան 100-ամյակի առթիվ), ՊԲՀ, 2010, № 1, էջ 234-244: Նույնի՝ В окружении историков (сборник статей и рецензий), Ереван, 2011, с. 112-134:

<sup>30</sup> Սահակյան Ռ., Ակադեմիկոս Սկրտիչ Ներսիսյան- 85, «Իրան-Նամե», 1995, № 6 - 1996, № 1, էջ 13:

<sup>31</sup> Սարգսյան Ֆ., Հիշատակի խոսք, ՊԲՀ, 1999, № 1, էջ 5-6:

<sup>32</sup> Սարուխանյան Ն., Խոսք՝ նվիրված ակադեմիկոս-պատմաբանի հիշատակին, «Հայաստանի կյունուհիստ», 1999, 22-28 հոկտեմբերի, № 43:

<sup>33</sup> Ստեփանյան Ս., Անվանի պատմաբանը, հայրենասեր-քաղաքացին (Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի ծննդյան 85-ամյակի առթիվ), «Հայաստանի կյունուհիստ», 1995, 15 դեկտեմբերի, № 7, էջ 3-4: Նույնի՝ Ականավոր պատմաբանը և հասարակական գործիչը (Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի ծննդյան 85-ամյակի առթիվ), «Նաիրի», 1998, 17 հունվարի, № 1: Նույնի՝ Հայկական հարցի և հայերի ցեղասպանության լուսաբանումը Մ. Ներսիսյանի աշխատություններում, «Լրագրեր հասարակական գիտությունների», 2001, № 1, էջ 61-72: Նույնի՝ Ականավոր գիտնականը, պատմաբանը և մեծ հայրենասերը, «Գիտություն աշխարհում», 2010, № 4, էջ 21-27: Նույնի՝ Ականավոր գիտնականը և մեծ հայրենասերը (Ակադեմիկոս Սկրտիչ Գեղամի Ներսիսյանի ծննդյան մեկ դարը), «Լրագրեր հասարակական գիտությունների», 2010, № 3, էջ 392-402:

<sup>34</sup> Վարդանյան Ն. (Դերոյան Ն.), Մ. Ներսիսյան (Ծննդյան 85-ամյակի և Մովսես Խորենացու մեդալով պարգևատրվելու առթիվ), ՊԲՀ, 1996, № 1-2, էջ 265-268:

Սակայն առայժմ չկա ամփոփ մի աշխատություն պրպտող ու մտորող գիտնականի պատմագիտական ժառանգության մաս կազմող մեզ հետաքրքրող հիմնահարցերի վերաբերյալ:

**ՄՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԿՈՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ստենախտությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 193 էջ:

ՆԵՐՎՈՒԹՅՈՒՆՈՒԲ հիմնավորված է թեմայի պրոֆականությունը, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը և գործնական նշանակությունը, ուսումնասիրության փորձաքննությունը, մեթոդաբանական հիմքերը, թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, տրված է հիմնախնդրին վերաբերող սկզբնաղբյուրների ու գրականության տեսությունը:

*Առաջին գլխում* «ԱՎԱՂԵՄԻԿՈՍ ՄԿՐՏԻՉ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՄԵՆՈՒԹՅՈՒՆԸ», դիտարկված է ժամանակին բնորոշ ծանր պայմաններում քաղաքական մեղադրանքների բովով անցած և մեծագույն խոչընդոտներ հաղթահարած պատմաբանի կյանքի անցած ճանապարհը:

Ներկայացվել է Մ. Ներսիսյանի՝ սկզբունքային և պատասխանատու մարդու ամբողջական կերպարը, արժևորվել նրա գիտական ժառանգությունը, ինչպես նաև տեղն ու դերը մանկավարժական գործունեության ոլորտում, որը գերազանցապես զուգակցվել է գիտահետազոտական աշխատանքի հետ:

Կարևորվել է Մ. Ներսիսյանի՝ որպես պատասխանատու խմբագրի, 40-ամյա ծառայությունը «Պատմա-բանասիրական հանդեսի» գործունեության բնագավառում:

Ներկայացվել է նաև նրա հասարակական ակտիվ գործունեությունը: Նա անմասն չի մնացել ժամանակի իրադարձություններին և բազմիցս պոճազանքել է հասարակական կյանքում տեղի ունեցած անցքերին: Այսպիսին են լինում մեծերը, ինչի շնորհիվ նրանց պատվիրանը լսելի է սերունդներին: Հետևաբար, պատմաբանի ասարած ժամանակը չափվեց ոչ միայն իր կյանքի տարիներով, այլև թողած հնչելու ու արդիական պատմագիտական հարուստ ժառանգությամբ:

*Երկրորդ գլուխը* «ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶՆԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՄԱՆ ԳԱՐԱՏԱՄԱՆ Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵՑՎԱԿՐԳԸ», բաղկացած է հինգ ենթագլխից:

*Առաջին ենթագլխում* «1850-1870-ական թվականների ազատագրական շարժման լուսաբանումը», հիմնավորվել է, որ XIX դարի 50-70-ական թվականները, հիրավի, համարվում են ազգային-ազատագրական պայքարի զարթոնքի տարիներ, ինչը, սակայն, իր գիտական լուսաբանումը չի գտել խորհրդահայ պատմագիտության մեջ՝ կապված անհատի պաշտանունքի հետ: Հակազդիտական ըմբռնումները 1920-1930-ական թթ. հնարավորություն չեն ընձեռել ըստ արժանվույն զմահատելու մեր պատմության համար մեծ կարևորություն ունեցող շարժումները:

Խորհրդահայ պատմաբանները որոշ հասպտղումներով ու ելևէջներով ի վերջո գիտական հիմքերի վրա դրեցին ազգային-ազատագրական շարժման պատմության ուսումնասիրությունն իր բոլոր բաղկացուցիչներով: Եվ որպես

այդպիսին առաջին ծավալուն և մեծարժեք աշխատությունը, որը գրվեց հայ ազատագրական շարժման մասին՝ Մ. Ներսիսյանի մենագրությունն է<sup>35</sup>:

Երա պատմագիտական հայեցակարգում հայ ազատագրական շարժումը ժամանակագրական առումով ընդգրկում է տարբեր հասկաններ՝ դրամատիկական իրադարձություններով լի XVIII դար, XIX դարի առաջին կես և XIX դարի երկրորդ կես: Վերջինս ազգային-ազատագրական պայքարի գաղթնիքի ժամանակաշրջանն է:

XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժումը, ըստ Մ. Ներսիսյանի՝ ուներ իր առանձնահատկությունները և էսպես տարբերվում էր նախորդ շրջանի շարժումներից: Ժամանակի սոցիալ-տնտեսական պայմանները, քաղաքական միջազգային հարաբերությունները, ժողովրդական ապստամբական ելույթները, գաղտնի խմբակների, կազմակերպությունների ստեղծումը, ազգային կուսակցությունների գործունեությունը, կանախրական շարժումը, ֆիդայական պայքարը և հասարակական մեծ աղբեցություն ունեցող գաղափարախոսությունն այն առանձնահատկություններն էին, որոնք նոր որակ էին հաղորդում շարժմանը:

Որպես այդ շարժման փայլուն օրինակ և գագաթնակետ Մ. Ներսիսյանն իրավամբ համարում է 1862 թ. Չեյթունի ապստամբությունը, ազատագրական շարժման վերելքը պայմանավորելով երկրի սոցիալ-տնտեսական կոտորտություններով, ինչը, անշուշտ, աղերս ուներ միջազգային ասպարեզում տեղի ունեցող իրադարձություններին, նշում այն հիմնական պատճառները, որոնք հանգեցնում էին ազգային ճնշման ուժեղացմանը: Ուստի՝ XIX դարի երկրորդ կեսին նոր մակարդակի բարձրացավ ազատագրական շարժումը: Արևմտահայությունը ծանր կացությունից ձերբազատվելու ելք էր որոնում, որն արտահայտվում էր պայքարով: Հետևաբար, այն ինքնաբերական էր և կրում էր ինքնապաշտպանական բնույթ: Ժողովրդի համբերության բաժակը լցվել էր, նա այլևս այլ ելք չուներ, քանզի դրված էր իր լինել-չլինելու խնդիրը, և որ ամենահավորն է՝ ֆիզիկական ոչնչացման վտանգը: Մ. Ներսիսյանը բազում փաստերով ապացուցում է, որ հենց այդ ժամանակաշրջանում էլ Արևմտյան Հայաստանը դառնում է ազգային-ազատագրական շարժման օջախ:

Պատմաբանը յուրովի է մեկնաբանում Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Ռաֆֆու, Գր. Արծրունու գործունեությունը, անհատներ, ովքեր տեսականորեն հիմնավորելով ազատագրական շարժումը, մարտական շունչ հաղորդեցին դրան: Ազատագրական գաղափարների քարոզչությունը դարձավ ժամանակի հայ հասարակական-քաղաքական կյանքի խոշոր երևույթներից մեկը: Այդ նշանակալից շրջադարձի մեջ Մ. Ներսիսյանն առաջին հերթին հսկայական դերը հատկացնում է Միքայել Նալբանդյանին, ով նշեց այն ճշմարիտ ճանապարհը, որով պետք է ընթանար հայ ազատագրական շարժումը:

XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման ընդհանուր համայնապատկերում Մ. Ներսիսյանը հանգամանորեն վերլուծության ենթարկեց Արևելյան և Արևմտյան Հայաստանում 60-70-ական

<sup>35</sup> Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը օյուրբական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Երևան, 1955 (այսուհետև՝ I հրատ.): Նույնի Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., Երևան, 2002 (այսուհետև՝ II հրատ.):

թվականներին հիմնված գաղտնի խմբակների ու կազմակերպությունների գործունեությունը:

Պատմաբանը փաստացի օրինակներով հիմնավորել է, որ ազատագրական շարժումը XIX դարի 70-ական թվականներին շարունակվել է նոր ուժով և կանգ առնում 1878 թ. Չեյթունում Պապիկ իշխանի գլխավորությամբ բռնկված խոշոր և ավելի կազմակերպված ապստամբության վրա:

Ըստ Ս. Ներսիսյանի՝ 1870-ական թթ. ազգային-ազատագրական պայքարի ցայտուն դրսևորումներից է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին արևմտահայերի ակտիվ մասնակցությունը: ՈՒստի նա հատուկ ուշադրության է արժանացրել ոչ միայն այդ, այլև XIX դարի ռուս-թուրքական բոլոր պատերազմների ժամանակաշրջանը, արևմտահայերի՝ թուրքական լուծի թոթափելու ձգտումը համարելով շարժման բաղկացուցիչ մասն իր յուրահատուկ դրսևորումներով:

*Երկրորդ ենթագլուխը* կրում է «1880-1890-ական թվականների ազատագրական շարժման գնահատականը» վերնագիրը: Փաստվել է այն հանգամանքը, որ Բեռլինի կոնգրեսից հետո արևմտահայությունը մատնվեց բախտի քմահաճույթին: ՈՒստի Ս. Ներսիսյանը տրամաբանական և օրինաչափ է համարում այն, որ ստեղծված իրադրության մեջ ազատագրական շարժումը նոր թափ ստացավ:

XIX դարի 80-ական թվականներից հայ ազգային-ազատագրական շարժումն իր գագաթնան նոր փուլն է թևակոխում, կապված ազատագրական գաղտնի կազմակերպությունների, ապա՝ ազգային կուսակցությունների հանդես գալու հետ:

XIX դարի երկրորդ կեսի ազատագրական շարժման ամենախոշոր փայլատակումը պատմաբանը համարում է Չեյթունի 1895 թ. ապստամբությունը: Նրա ինքնատիպ մտորումներն ու եզրահանգումները ներկայացված են «Չեյթունցիների 1895-1896 թթ. ինքնապաշտպանական հերոսամարտը» հոդվածում<sup>36</sup>:

Ս. Ներսիսյանի վկայակոչմամբ, «Չեյթունցիների այս ապստամբությունը, որը XIX դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման ամենափայլուն դրվագն է, ի չիք դարձրեց հայ լեռնականներին բնաջինջ անելու թուրքական կառավարության արյունոտ ծրագիրը...»<sup>37</sup>:

*Երրորդ ենթագլխում* «Ազատագրական շարժման ընդհանուր բնութագիրը», ներկայացված են XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման բնույթի, շարժիչ ուժերի, հոսանքների, կապերի, կողմնորոշման և գաղափարախոսության հարցերը, որոնք նախկինում ոչ ճիշտ դիրքերից են լուսաբանվել մի շարք հեղինակների կողմից<sup>38</sup>:

<sup>36</sup> ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 247, թ. 77-81, նաև գ. 256, թ. 15-16, նաև գ. 274, թ. 10, նաև գ. 332, թ. 3-14, 27-45, տես նաև Ներսիսյան Ս., Չեյթունցիների 1895-1896 թթ. ինքնապաշտպանական հերոսամարտը, ՊԲՀ, 1996, № 1-2, էջ 7-16, տես նաև նույնի՝ Պատմության կելծարարները, էջ 183-196:

<sup>37</sup> ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 275, թ. 9, տես նաև Ներսիսյան Ս., Հայ ազատագրական շարժումը և հնչակյանները 1880-1890-ական թվականներին, ՊԲՀ, 1987, №3, էջ 31:

<sup>38</sup> Կարինյան Ա., Հին Թուրքիան և թուրքահայերը, «Նորք» հանդես, Երևան, 1926, № 1-2; Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. 1, М.-Л., 1928. Լեռ, Թուրքահայ յղակախոսության գաղափարաբանությունը, Կ. Ա, Փարիզ, 1934:

Պատմաբանը XIX դարի երկրորդ կեսի սուլթանական թուրքիայի դեմ ծավալված շարժումը դիտում է որպես հայ ժողովրդի միանական պայքար՝ Արևմտյան Հայաստանը համարելով դրա կենտրոն: Այսպիսով, ժխտվում է այն սխալ պատկերացումը, որ հայ ժողովուրդն ունեցել է երկփեղկված ազատագրական շարժում: Հիմնավորվել է, որ այն ոչ միայն արևմտահայերի, այլև ամբողջ հայ ժողովրդի հեղուսական պայքարն էր արևմտահայությանը թուրքական բռնաաբուության ծանր լծից ազատագրելու համար: Իսկ դա նշանակում է, որ Թուրքիայի դեմ ազգային-ազատագրական պայքարը միայն արևմտահայության խնդիրը չէր և այն ստանում էր համազգային բնույթ:

Օսմանյան տիրաաբության դեմ ծավալված հայ ազգային-ազատագրական շարժումը Մ. Ներսիսյանը բնութագրել է ժողովրդա-դեմոկրատական, նրա գլխավոր շարժիչ ուժը համարելով գյուղացիությանը:

Շարժումն իր ամբողջության մեջ Մ. Ներսիսյանը որակել է իբրև հակաավատատիրական, ժողովրդական, իրական բուլանդակությանը՝ ժողովրդավարական և առաջադիմական, որն էլ իր հերթին փաստորեն հանդիսանում էր թուրքական միաաբության կարգերի դեմ ուղղված բուրժուադեմոկրատական պայքարի դրսևորումներից մեկը<sup>39</sup>:

Մ. Ներսիսյանը հայ ազատագրական շարժման հիմնական և բնորոշ կողմերից է համարում շարժման ընդգծված բուսական կողմնորոշումը, ինչը միանգամայն բնական է ու օրինաչափ, և որ ամենակարևորն է՝ պատճառաբանված:

Նա փաստերի վկայակոչմամբ եզրակացնում է, որ Արևմտյան Հայաստանում ծավալված հայ ազատագրական պայքարը մեկուսացված չէր, այն կապեր ուներ քուրդ, ասորի և մյուս ժողովուրդների հակասուլթանական շարժումների հետ<sup>40</sup>: XIX դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժումը կազմում էր սուլթանական բռնաաբության տակ գտնվող բալկանյան ժողովուրդների պայքարի ընդհանուր շղթայի մի օղակը: Վերջինս շատ ընդհանրություններ ուներ հայ ազատագրական շարժման հետ: Կային փոխազդեցություններ, գաղափարական, գործնական, քաղաքական կապեր և ընդհանուր թշնամու դեմ պայքարելու բուռն ցանկություն:

Այսպիսով, տալով ազգային-ազատագրական շարժման ընդհանուր գնահատականը, Մ. Ներսիսյանը միաժամանակ քաղաքացիական մեծ համարձակությամբ գաղափարական վերանայման ենթարկեց նաև խորհրդակապ պատմագիտության մեջ մինչ այդ «ազգայնական» պիտակ ստացած XIX դարի երկրորդ կեսի հայ առաջավոր հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչներին, ովքեր վիթխարի դեր են կատարել շարժման գաղափարախոսության զարգացման գործում: Նա բարձր է գնահատել և արժևորել հայ ժողովրդի ազատագրական իղձերն արտահայտող փայլուն գործիչներին, նորովի լուսաբանել նրանց հասարակական հնչեղությունն ու նեցող առաջադիմական գաղափարները:

<sup>39</sup> ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 133, թ. 217, տե՛ս նաև Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը... I հրատ., էջ 254-255:

<sup>40</sup> ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 114, թ. 170, տե՛ս նաև Ներսիսյան Մ., նշվ. աշխ., II հրատ., էջ 248:

*Չորրորդ ենթագլուխը* վերնագրված է «Ազատագրական շարժման նկատմամբ մեծ տերությունների վերաբերմունքի գնահատականը»:

Բնութագրելով և վերհանելով մեծ տերություններից (Անգլիա, Ֆրանսիա, Ավստրո-Հունգարիա, ԱՄՆ, Գերմանիա) յուրաքանչյուրի ծրագրերն ու նպատակները, Ս. Ներսիսյանը նրանց վերաբերմունքը շարժման նկատմամբ որակել է թշնամական, երկրներ, որոնց երկրիմի քաղաքականությունը ոգևորել է Թուրքիային, զոստանդել նրան՝ իր վաղեմի երազանքի իրականացման գործում: Այդ երկրներն իրենց մեղսակցությունն ունեն հայ ազգային-ազատագրական շարժման ծախսողման մեջ:

Ամփոփելով արևմտյան երկրների վերաբերմունքը, պատմաբանն իրավագիտորեն գրում է. «Մեծ պետությունների հետադեմ քաղաքականությունն արևմտահայերի ազգային-ազատագրական շարժման նկատմամբ զոստանդեց Բ. Դռանը: Օգտվելով նրանց բարյացակամ ու հովանավորող քաղաքականությունից, սուլթանական կառավարությունը ձեռնամուխ եղավ արևմտահայ բնակչության գանգվածային կոտորածներին»<sup>41</sup>:

*Հինգերորդ ենթագլուխը* կրում է «Ս. Ներսիսյանն ընդդեմ հայ ազգային-ազատագրական շարժման պատմության կեղծարարների» վերնագիրը:

Թուրքական պաշտոնական պատմագրությունը դեռևս վաղուց կեղծելով իրական փաստերը, ծուռ հայելու մեջ է ներկայացրել թե՛ Օսմանյան կայսրության և թե՛ նրա տիրապետության տակ գանվող ժողովուրդների պատմությանը վերաբերող հարցերը:

Պատմության թուրք կեղծարարները փորձել և փորձում են նենգափոխել հայ ազգային-ազատագրական շարժման պատմությունը ևս: Իր բազմաթիվ ուսումնասիրություններում, հողվածներում և հրապարակային ելույթներում Ս. Ներսիսյանը հետևողականորեն քննադատել է նրանց:

Անհերքելի են պատմաբանի փաստարկումներն օսմանյան պետության վարած դժամն քաղաքականության, ժողովուրդների ստրկացման և տառապալի շահագործման ենթարկելու հարցում: Եւ վճռականորեն մերժում է թուրք կեղծարարներին, ովքեր հաշվի չեն նստում ո՛չ փաստերի, և ո՛չ էլ ճշմարտության հետ: Սի շարք թուրք պատմաբաններ հատուկ աշխատություններ են նվիրել արևմտահայության պատմությանը, Հայկական հարցին ու հայ ազատագրական շարժմանը: Նրանք ծայնակցելով մեկը մյուսին, փորձել են փառաբանել իրենց պետության պատմությունը, գրելով, թե իբր այդ պետության մեջ ժողովուրդներն ասրել են անհոգ ու բարեկեցիկ կյանքով, օգտվել լայն իրավունքներից, որ նրանք ոչ մի պատճառ չեն ունեցել պայքարելու օսմանյան տիրապետության դեմ: Այսպես, Է. Որխար «Հայերը պատմության մեջ և Հայկական հարցը» գրքում<sup>42</sup> խեղաթուրել է հայ-թուրքական հարաբերությունների պատմությունը և չարամտորեն զրպարտել հայ ժողովուրդին: Մեղքը բարդելով հայերի վրա, Է. Որխար գտնում է, թե իբր նրանք՝ սահմանադրությունից օգտվելով և ազատության շնորհներ ստանալով, իրենց քայքայիչ գործունեությամբ աղետ են բերել կայսրությանը՝ խռովելով նրա խաղաղությունը<sup>43</sup>: Ընդհանրապես Է. Որխան այնքան է հեռանում պատմական

<sup>41</sup> Սույն տեղում:

<sup>42</sup> Uras Esat. Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950.

<sup>43</sup> Uras Esat, նշվ. աշխ., էջ 177:

ճշմարտությունից, որ նույնիսկ ժխտում է արևմտահայության զանգվածային կոտորածներն ու ցեղասպանությունը, դրանց վերաբերյալ զոյություն ունեցող փաստերն ու հսկայածավալ զրականությունը համարում միտամնավոր ու հնարովի:

Նրան է համերաշխում Բ. Շիմշիրը «Հայկական հարցը 1774-2005 թվականներին» աշխատության մեջ<sup>44</sup>: Նա հանգում է այն եզրակացության, որ թուրքերն ավելի ծանր վիճակում էին գտնվում, քան հայերը: Նրանք դժգոհության առիթ չեն ունեցել և օգտվել են լայն իրավունքներից: Այս ավելացում, որ եթե 1880-ական թթ. հայերը դիմել են խռովությունների՝ մեղավորը ստեղծված «կոմիտեներն» են, որոնց հրահրումով ժողովուրդը դուրս է եկել պայքարի: Հեռանալով ճշմարտությունից, նա հայկական շարժումները համարում է «Արևելյան Անատոլիայում անզուր-ռուսական նրցակցության... գործոն», այսինքն՝ շարժումը խաղալիք էր մեծ տերությունների քաղաքականության ձեռքում, մի քաղաքականություն, որը «կեղծ հույսերով» է կերակրել այդ շարժումը<sup>45</sup>:

Սանրաման վերլուծելով և ամփոփելով պատմության կեղծարարների տեսությունները, Մ. Ներսիսյանը վճռականորեն մերժում է նրանց հակապատմական թեզերը, որոնք ճշմարտացիության տեսակետից հեռու են վիճելի լինելուց:

Արևմտահայության ազգային-ազատագրական շարժումը ստվերող պատմության կեղծարարների մերկացումն ունի գիտատեսական և գործնական կարևոր նշանակություն:

Առենախոսության *երրորդ գլուխը*, որը վերնագրված է «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍՎԱՆՈՒԲԱՆ Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՈՒՍՈՒՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ», բաղկացած է չորս ենթագլխից:

*Առաջին* «Օսմանյան թուրքիան որպես ցեղասպանության հիմնադիր պետություն» ենթագլխում պատմական ակնարկ է արվում Հայաստանում իր տիրապետության հաստատման ժամանակներից ի վեր օսմանյան պետության հայաիպած քաղաքականության մասին՝ ընդհուպ մինչև հայերի պարբերական կոտորածներն ու ցեղասպանությունը:

Իր ուրույն վերլուծություններով, փաստերի համոզիչ մեկնաբանությամբ Մ. Ներսիսյանը պատմական էքսկուրս է կատարում, հետադարձ մի հայացք ձգում օսմանյան պետության անցած ուղուն և գրում. «Իշխանության գլուխ անցած սուլթանները և ավատական վերնախավի ներկայացուցիչներն իրենց նյութական ապահովության ու հարստացման հիմնական աղբյուրը դարձրին թալանչիական արշավանքները, պատերազմները, նվաճված երկրների կողոպուտը, մեծ մասշտաբներով կատարվող գերեվարությունը, ռազմատուգանքի ու ծանր հարկերի բռնազանձումը և այլն»<sup>46</sup>:

Որպես հիմնավորումն այդ ամենի՝ Մ. Ներսիսյանը դիմում է տարբեր ժամանակներում, այլազգի հասարակական-քաղաքական գործիչների

<sup>44</sup> Şimşir Bilâl N., Emneni meselesi 1774-2005, Ankara, 2006.

<sup>45</sup> Şimşir Bilâl N., նշվ. աշխ., էջ 50:

<sup>46</sup> ՀԱՄ, ֆ. 818, ց. 1, գ. 274, թ. 13, տե՛ս նաև Ներսիսյան Մ., Պատմության կեղծարարները, էջ 9, տե՛ս նաև նույնի՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 26:



զմահատականների, թուրքական բռնապետությանը տված նրանց որակումներին: Նրանք վկայում են Օսմանյան կայսրության որպես նոր ժամանակների ցեղասպան երկրի, իրական էության մասին: Ռուսի հիմնավորվում է այն իրողությունը, որ հայոց մեծ ողբերգության արմատները գտնվում են դարերի խորքում և գալիս են օսմանյան պետության ակունքներից, որի ստեղծումից սկսած թուրքերը քրիստոնյաների նկատմամբ որդեգրել էին ծայրահեղ քաղաքականություն՝ կյանքի կոչելով մարդասոց օրենքներ և դրանց իրագործման դաժան ձևեր ու միջոցներ՝ այն դարձնելով հսկայական կայսրության գործելակերպ: Հետևաբար, նման երկիրը չէր կարող քաղաքակրթություն տարածել իր կողմից նվաճած երկրներում, ինչն էլ բազում վկայություններով ներկայացնում է Մ. Ներսիսյանը:

*Երկրորդ ենթագլխում* «1890-ական թվականների հայկական կոտորածների լուսաբանումը», դիտարկվել է պատմական այն իրավիճակը, որում հայտնվել էր արևմտահայությունը 1878 թ. Բեռլինի կոնգրեսից հետո, երբ ալայմանազրի 61-րդ հոդվածով միջազգայնացվեց Հայկական հարցը:

Արևմտահայության մեջ ուժեղացավ ձգտումը դեպի ազատությունը, դեպի պայքարը հանուն իր պատվի և մարդկային տարրական իրավունքների, մանավանդ, որ կար սերբերի, հույների ու բուլղարների ոգևորիչ օրինակը: Ի պատասխան թուրքական իշխանությունների դաժան ճնշումների, հայերը, որտեղ դա հնարավոր էր, դիմում էին ինքնապաշտպանության, ազատագրական պայքարի, որը եղել և մնում է ամեն մի ճնշված ժողովրդի անսասան իրավունքը և սրբազան պարտականությունը:

Սակայն թուրքական պետությունը լսել իսկ չէր ուզում հպատակ ժողովուրդների իրավունքների մասին: «Ազգային հարցի լուծման համար նա զիտեր միայն մեկ ուղի՝ զանգվածային կոտորածների, ֆիզիկական ոչնչացման ուղին: Իշխանությունները գործում էին հրով ու սրով, անլուր դաժանությամբ», - նշում է Մ. Ներսիսյանը<sup>47</sup>:

Ներկայացվել է ռուս մտավորականության ցուցաբերած վերաբերմունքը 1894-1896 թթ. տեղի ունեցած հայոց ողբերգության նկատմամբ, որին հատուկ ուշադրություն է դարձրել Մ. Ներսիսյանը: «Արևմտահայերի կոտորածները և ռուս մտավորականությունը 1894-1896 թվականներին» հոդվածում<sup>48</sup> նա անդրադարձել է ռուս մտավորականության դիրքորոշմանը, բարձր զմահատել նրանց ջանքերով լույս տեսած, արևմտահայության կոտորածներին նվիրված հոդվածների և այլ նյութերի արժեքավոր ժողովածուները<sup>49</sup>:

XIX դարի 90-ական թվականների արևմտահայության զանգվածային կոտորածները Մ. Ներսիսյանը նույնպես որակում է որպես ցեղասպանություն:

*Երրորդ ենթագլխում* «Հայոց ցեղասպանության պատմության գիտական հետազոտության սկզբնավորումը», նշվել է, որ Հայոց ցեղասպանության

<sup>47</sup> Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Նախաբան, էջ VI:

<sup>48</sup> ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 172-187, նաև գ. 274, թ. 12, տես նաև Ներսիսյան Մ., Արևմտահայերի կոտորածները և ռուս մտավորականությունը 1894-1896 թվականներին, ՊԲՀ, 1997, № 1, էջ 15-24, տես նաև Մույնի՝ Պատմության կեղծարարները, էջ 151-163:

<sup>49</sup> Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, 1896. Братская помощь пострадавшим в Турции армянам, Москва, 1897.

պատմության ճշմարիտ պատկերը լուսաբանելու և այն բարձրաձայն հնչեցնելու առաջին իրավունքը նույնպես պատկանում է ակադեմիկոս Մ. Ներսիսյանին:

Դեռևս 1955 թ. հրատարակած իր ուսումնասիրություններից մեկում Մ. Ներսիսյանն անդրադարձել է Հայոց ցեղասպանության հարցին<sup>50</sup>: Նա Հայաստանի պատմական արխիվում և ԳԱ պատմության ինստիտուտի արխիվի պրոֆ. Լեոյի ֆոնդում հայտնաբերեց թվով ինն արժեքավոր փաստաթղթեր և 1965 թ. հրատարակեց «Նյութեր հայկական կոտորածների մասին» խորագրով<sup>51</sup>:

«Այս ինն արխիվային փաստաթղթերում նկարագրվում է արևմտահայերի ծանր դրությունը 1912-1914 թթ. և նրանց զանգվածային կոտորածները երիտթուրքերի կողմից 1915-1916 թթ.: Այդ նյութերի հեղինակների մեծ մասը համարվում են Արևմտյան Հայաստանում և ամբողջ Թուրքիայում կատարված արյունալի դեպքերի վկաները», - եզրակացնում է Մ. Ներսիսյանը<sup>52</sup>:

Նման արժեքավոր նյութերի հրապարակմամբ Մ. Ներսիսյանի ղեկավարությամբ հանրապետությունում հինք դրվեց Հայոց Մեծ Եղեռնի վերաբերյալ արխիվային փաստաթղթերի հավաքման ու մշակման մեծ և կարևոր նշանակություն ունեցող աշխատանքին: Այդ փաստաթղթերը դարձան այն անկյունաքարը, որի վրա բարձրացավ 1966 թ. Մ. Ներսիսյանի առաջաբանով և խմբագրությամբ հրատարակված, երկարատև որոնումների արդյունք հանդիսացող մեծածախ, անկրկնելի ու ծավալուն ժողովածուն<sup>53</sup>: Կարևորվել է դրա պատմա-ճանաչողական արժեքը՝ որպես մնայուն պատմական տարեգրություն Հայոց ցեղասպանության պատմության վերաբերյալ: Այդպիսով հինք դրվեց Հայոց ցեղասպանության պատմության գիտական ուսումնասիրությանը:

*Չորրորդ ենթազույգը* վերնագրված է՝ «Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության պատմության լուսաբանումը», որտեղ ներկայացված է Հայոց ցեղասպանությանը նախորդած ժամանակաշրջանը, Մ. Ներսիսյանի մոտեցումը դրա ժամանակագրական սահմանների վերաբերյալ, պատմության կեղծարարների քողագերծումը: Ըստ նրանց՝ երիտթուրքերը չեն ունեցել ցեղասպանության կանխամտածված ծրագիր և ռազմական իրավիճակից ելնելով արևմտահայերին տեղափոխել են երկրի խորքերը, և որ պատերազմի տարիներին զոհվել են թե՛ հայերը, թե՛ թուրքերը:

Մ. Ներսիսյանը շեշտում է այն իրողությունը, որ Մեծ Եղեռնի գլխավոր հանցագործներն երիտթուրքերն էին: Նրանք ունեին իրենց կանխամտածված բարբարոսական ծրագիրը, որը նախապես որոշված, պետական մակարդակի հասցված և դաժանորեն իրագործված քաղաքականությունն էր: Նա կասկածից վեր է համարում, որ «Մեծ Եղեռնի գլխավոր, հիմնական մեղքն

<sup>50</sup> Ներսիսյան Մ., Արևմտահայերի մասսայական կոտորածները 1915-1916 թվականներին, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1955, №5, էջ 50-53:

<sup>51</sup> ՀՍՍՌ, ֆ. 818, ց. 1, գ. 255, թ. 2-9, նաև գ. 343, թ. 1-8, նաև գ. 504, թ. 10-16, նաև գ. 621, թ. 54-61, տե՛ս նաև Ներսիսյան Մ., Նյութեր հայկական կոտորածների մասին (Մեծ Եղեռնի 50-ամյակի առթիվ), ՊԲՀ, 1965, №1, էջ 85-100, տե՛ս նաև նույնի՝ Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, էջ 352-373:

<sup>52</sup> Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, էջ 373:

<sup>53</sup> Генциал армян в Османской империи.

ընկնում է էնվեր, Թալեսթ, Ջենալ փաշաների և մյուս ռազմաշունչ գործիչների փրակ, գործիչներ, որոնք Հայկական հարցում հետևողականորեն և ամենայն համառությամբ հետապնդում էին իրենց խիստ էքսպանսիոնիստական, ջարդարարական ու ավանտյուրիստական ծրագրերը»<sup>54</sup>:

Խոսելով Հայոց ցեղասպանության փաստը հաստատող աղբյուրների մասին, Ս. Ներսիսյանն ամենից առաջ նկատի է ունեցել գերմանական ու թուրքական սկզբնաղբյուրները և նախապատվությունը տվել է հենց դրանց<sup>55</sup>:

ԵՋՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ անվուժված են արեմափտության հիմնական արդյունքները:

Ալալեմիկոս Սկրուիչ Ներսիսյանը պատկանում է մեր այն խոշորագույն պատմաբանների շարքին, ովքեր իրենց վաստակով զարգացրել են հայրենի պատմագիտական միտքը:

Խորհրդակալ պատմագիտության մեջ կարևոր նշանակություն ունի Ս. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ» հիմնարար մենագրությունը: Արիվմային փաստաթղթերին խորագիտակ պատմաբանը քննախույզ վերլուծությունների հենցի փրակ, նպատակալաց հետևողականությամբ ցույց է տվել, որ հայ ազգային-ազատագրական շարժումը ոչ թե պատճառ, այլ հետևանք էր Թուրքիայի ջարդարարական քաղաքականության, հիմնավորել, որ արևմտահայության գոյատևման միջոցներից մեկը եղել է պայքարը օսմանյան պետության դեմ, որի հիմքում ընկած էր ինքնապաշտպանական շարժումը, նրա ազատաբաղձ ոգին ու ասարելու տենչը:

XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժումը Ս. Ներսիսյանը ներկայացրել է ոչ թե մեկուսացված, այլ զուգահեռներ է անցկացրել հայ և թուրքահպատակ այլ ժողովուրդների պատմության միջև, ավելի տեսանելի դարձրել հայ ժողովրդի ազատագրական պայքարի դրվագները:

Համեմատության և հակադրության ընդհանուր համայնապատկերում պատմաբանը վերլուծել է սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր մակարդակներում գտնվող արևմտահայերի և արևելահայերի վիճակը՝ այդ կերպ ավելի համոզիչ դարձնելով արևմտահայության համար ստեղծված ծանր պայմանները, ֆիզիկական բնաջնջման սպառնալիքը: Միանգամայն իրատեսորեն վերլուծելով թուրքական կառավարության կողմից գերազանցապես թղթի վրա իրագործվող բարենորոգումները, նա եզրակացրել է, որ այն ոչ մի նշանակություն չունեի արևմտահայության կյանքում և չէր կարող կասեցնել նրա օրեցօր ծանրացող վիճակը:

Նա բազմաթիվ փաստերով հիմնավորել է ազգային ճնշումների ուժեղացման պատճառները, վկայակոչել Ջեյթունի և Սասունի դեմ ձեռնարկված միջոցառումները, հայկական ջարդերի կազմակերպման նպատակով թուրքական կանոնավոր զորքերի և բրդական ջոկատների օգտագործումը:

<sup>54</sup> ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 278, թ. 144, տես նաև Ներսիսյան Ս., Պատմության կեղծարարները, էջ 128, տես նաև Մույնի՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 11:

<sup>55</sup> ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 248, թ. 15-25, նաև գ. 256, թ. 29-31, նաև գ. 256, թ. 138-150, 151-168, նաև գ. 274, թ. 1-4:

Թուրքիայի այդ քաղաքականությունը Մ. Ներսիսյանը հիմնավորել է թուրք բուրժուազիայի ծայրահեղ հետադիմական գաղափարախոսությամբ, երբ պանիսլամիզմի և պանթուրքիզմի անբողջ զինանոցն ուղղվում էր քրիստոնյա ժողովուրդների դեմ:

Մ. Ներսիսյանը բազում փաստերով ցույց է տվել, որ XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման էապես տարբերվում էր նախորդ ժամանակների շարժումներից և վերլուծություններ կատարել Ջեյթունի 1862 թ. ապստամբության օրինակով: Պա համազգային շարժման ժամանակաշրջանն էր, ինչը լայն արձագանք գտավ հայ ժողովրդի կյանքում: Պատմաբանն այն դիտել է որպես միամական պայքար՝ Արևմտյան Հայաստանը համարելով շարժման կենտրոն, մերժելով այն մտայնությունը, թե հայ ժողովուրդն ունեցել է երկվեղկված ազատագրական շարժում:

Նա, ելնելով հայ ազգային-ազատագրական շարժման առանձնահատկություններից, եզրակացրել է, որ այն իր ամբողջությամբ մեջ հակաալիստադիական, ժողովրդավարական, համազգային, առաքաղիմական շարժում էր, որի ընթացքում հանդես եկան երկու հիմնական ուժեր՝ բուրժուազիան և գյուղացիությունը, վերջինիս համարելով շարժիչ ուժ՝ առաջնորդ ունենալով դեմոկրատական առաջավոր մտավորականությունը:

Մ. Ներսիսյանն առաջինն էր, որ բարձրաձայնեց թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած պայքարի մասին՝ դրակելով այն որպես ազգային-ազատագրական, տալով համապատասխան հիմնավորումներ: Նա հանգել է միանգամայն ճիշտ եզրակացության, որ եթե բալկանյան ժողովուրդների պայքարն ակարտվեց հաջողությամբ, իսկ հայ ժողովրդինը՝ ոչ, ապա դա չի նշանակում, որ կարելի է սուվերել այդ շարժումը: Նա ընդգծել է ազգային կուսակցությունների դերը, որոշ դեպքում թույլ, որոշ դեպքում խոր ձևով, հակաառաջնական ելույթներ կազմակերպելու գործում:

Պատմաբանի իրավացի գնահատմամբ, ազգային-ազատագրական շարժման յուրահատուկ դրսևորումներից էր ռուս-թուրքական պատերազմների ժամանակ հայերի գործուն մասնակցությունը ռուսական բանակի ռազմական գործողություններին, այն հույսով ու հավատով, որ ռուսական զենքի հաղթանակի շնորհիվ կթոթախվի թուրքական լուծը: Նա շարժման բարկացուցիչ մաս է համարել նաև կանավորական շարժումը, որի նպատակն էր օգնել իրենց արևմտահայ եղբայրներին ազատագրվելու թուրքական բռնապետության ճիրաններից:

Մ. Ներսիսյանի պատմագիտական հայեցակարգում հայ ազգային-ազատագրական շարժման բարկացուցիչ մաս է կազմում նրա գաղափարախոսությունը: Այն և հայրենասիրական էր, և ազատագրական, ինչն ընդլայնվեց և դարձավ ժամանակի հասարակական-քաղաքական կյանքի խոշոր երևույթներից մեկը:

Նա անդրադարձել է նաև XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման կասեղի ու աղբեցությունների, մեծ պետությունների վերաբերմունքի և շարժման կողմնորոշման հարցերին: Առանց դրանց մեկնաբանման անբողջական չէր լինի շարժման պատմությունը, միաժամանակ՝ հայ ազատագրական շարժումը շարկապելով ռուսական հեղափոխական շարժումների հետ:

Պատմաբանը վերլուծել է քաղաքական տարբեր շահեր հետապնդող երկրների բացասական վերաբերմունքը դեպի հայ ազգային-ազատագրական շարժանը՝ քողագերծելով նրանց երկրիմի քաղաքականությունն ու վարքագիծն իրենց իրավունքները պաշտպանող փոքր ժողովուրդների նկատմամբ:

Մ. Ներսիսյանը բարձր գնահատական տվեց և արժևորեց հայ ժողովրդի ազատագրական իրծերն արտահայտող փայլուն գործիչներին (Ռ. Պատկանյան, Գր. Արծրունի, Գ. Սիվանձտյանց և ուրիշներ): Նա նորոպի լուսաբանեց նրանց առաջադիմական գաղափարները՝ համարձակ քայլ կատարելով այդ հիմնահարցի շուրջ ժամանակին ստեղծված քարացած և ապագային տեսությունների դեմ:

Մեծավաստակ պատմաբանը ծանրակշիռ ներդրում ունեցավ նաև Հայոց ցեղասպանության պատմության գիտական ուսումնասիրության բնագավառում: 1966 թ. Մ. Ներսիսյանի առաջաքանով և խմբագրությամբ լույս տեսած «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» խորագրով մեծաքժեք, ծավալուն փաստաթղթերի ժողովածուն մնայուն տեղ է զբաղեցնում Հայոց ցեղասպանության պատմությանը միկրված ուսումնասիրությունների շարքում:

Գիտական և ճանաչողական մեծ արժեք ունի Մ. Ներսիսյանի «Պատմության կեղծարարները» աշխատությունը: Այն տարբեր ժամանակներում զրված հողվածների մի ամբողջ շարք է, մեկը մյուսին հաջորդող ու լրացնող, կուռ տրանսպարենությամբ, համարձակ մտքերով ու եզրահանգումներով, որսեղ հեղինակը բնության է ենթարկել հայագիտությանը հետաքրքրող հայերի զանգվածային կրտորածներն ու ցեղասպանությունը ժխտող թուրքական և թուրքամետ պատմաբանների հակաօխտական տեսակետները:

Մ. Ներսիսյանի «Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր» աշխատությունը հարստացրեց հայ պատմագիտական միտքը: Այն գիտնականի կյանքի վերջին շրջանի բազմաթիվ ուսումնասիրությունների ամփոփումն է: Դրա փաստառատ հենքն ամբողջացրել է Հայոց ցեղասպանության պատմությունը: Նա բազում կռվաններով հիմնավորել է, որ Հայոց ցեղասպանությունը կազմակերպվել է նախապես մշակված և սալոնիկյան խորհրդաժողովներում ընդունված ծրագրով, իրագործվել ամենադաժան ձևերով ու մեթոդներով՝ դա համարելով անժխտելի իրողություն:

Եվ այսպես, ժամանակի անվանի հայագետն ընտրեց ուրույն ճանապարհ և տվեց իր՝ ներսիսյանական գնահատականը հայոց պատմության տարաբնույթ հիմնահարցերին՝ նոր աստիճանի բարձրացնելով հայ պատմագիտական միտքը: Նրա գիտական բարեխղճությամբ ու անաչառությամբ զրված ուսումնասիրությունները մնացին որպես ուսանելի փորձ և պատգամ-ուղեցույց գալիք սերունդներին:

Անենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրատարակումներում.

1. Ակադեմիկոս Սկրտիչ Ներսիսյանի կյանքն ու գործունեությունը, «Օրենք և իրականություն», Երևան, 2010 թ., օգոստոս, № 8, էջ 33-35, 2010 թ., սեպտեմբեր, №9, էջ 32-36:

2. Հայ ազգային-ազատագրական շարժման գնահատման հիմնահարցը ակադեմիկոս Մ. Ներսիսյանի հայեցակարգում, Պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված Խ. Աբովյանի ծննդյան 200-ամյակին (2009 թ. նոյեմբերի 19-21), Լարակ, Երևան, «Մանկավարժ», 2010, էջ 297-300:

3. Հայոց ցեղասպանության պատմության մի քանի հարցերի լուսաբանումը ակադեմիկոս Սկրտիչ Ներսիսյանի ուսումնասիրություններում, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2010, №2, էջ 16-26:

4. Կարապետյան Մ., Գևորգյան Է., Մելքոնյան Է., XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման խորհրդահայ պատմագրությունը (1921-1991 թթ.), Երևան, 2010, էջ 56-59, 66-79, 150-209:

5. Կարապետյան Մ., Գևորգյան Է., Մելքոնյան Է., Աբգարյան Ա., Հայոց Մեծ Եղեռնի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, 2010, էջ 170-185, 211-216:

МЕЛКОНЯН ЭДУАРД ВОЛОДЯЕВИЧ

ПРОБЛЕМЫ АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОГО  
ДВИЖЕНИЯ И ГЕНОЦИДА АРМЯН В НАУЧНОМ НАСЛЕДИИ АКАДЕМИКА  
М. НЕРСИСЯНА

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении».

Защита состоится 30-го сентября 2011 г. в 14<sup>00</sup> ч. по адресу г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4 на заседании специализированного совета 004 при Институте истории Национальной Академии Наук РА.

РЕЗЮМЕ

Научная диссертация посвящена всестороннему критическому анализу составляющих вопросов научного наследия известного, снискавшего признание арменоведа академика М. Нерсисяна: армянского национально-освободительного движения и истории Геноцида армян.

Диссертация состоит из Введения, трех глав, Заключений и Списка употребленных источников и литературы.

В Введении представлены современность темы, цель и задачи, научная новизна и практическое значение, экспертиза исследования, его методологические основы и степень изучения.

В первой главе, «Жизнь и деятельность академика М. Нерсисяна», представлен пройденный жизненный путь историка, прошедшего через политические обвинения и преодолевшего огромные трудности, присущие данному времени. Мы также обратились к краткому анализу его научных работ, а также по достоинству оценили место и роль М. Нерсисяна в области арменоведения.

Вторая глава носит название «Научно-историческая система взглядов М. Нерсисяна в вопросе оценки армянского национально-освободительного движения». Здесь мы оценили ту действительность, что в исследованиях М. Нерсисяна впервые после десятилетий молчания прозвучало полноценное слово о тяжелом положении западных армян, находившихся под турецким гнетом и их героической борьбе. В советской армянской историографии важное место занимает его основательная монография «Освободительная

борьба армянского народа против турецкой тирании“, где на основе исследовательских анализов с целеустремленной последовательностью показано, что национально-освободительное движение является не причиной, а следствием промительской политики Турции, обосновал, что одним из средств существования западных армян была борьба против Османского государства, в основе которой лежало освободительное движение.

Последнее представлено не изолировано, а проведены параллели между историей армян и других народов, находящихся под турецким гнетом, более ясно выявлены отдельные отрывки освободительного движения армян. Согласно М. Нерсисяну, движущей силой этой борьбы были крестьянство и прогрессивная демократическая интеллигенция. В течение движения неизменной осталась прорусская ориентация, которая являлась обоснованным и закономерным явлением в армянской действительности. Отрицательное отношение к освободительному движению показали западные великие державы. В исследованиях отрицаются и разоблачаются лживые утверждения фальсификаторов истории в освещении армянского освободительного движения.

В третьей главе, “Освещение геноцида армян в исследованиях М. Нерсисяна“, обосновывается, что корни великой армянской трагедии ведут в глубину веков и идут из османских источников. Освещая массовую резню армян в 90-ых годах 19-ого столетия, М. Нерсисян также назвал эту политику геноцидом.

Историк проложил основу научному исследованию истории геноцида армян. Ценнейший сборник документов с названием “Геноцид армян в Османской империи“ с прологом и под редакцией М. Нерсисяна, опубликованный в 1966 году занимает незаменяемое место в исследованиях, посвященных трагедии армянского народа.

“Фальсификаторы истории“ М. Нерсисяна имеет большое научное и познавательное значение. А фактическая база исследования “Неопровержимые документы геноцида армян“ обобщает историю проблемы. Он с помощью множества доводов обосновал, что геноцид армян был организован с помощью плана, который был заранее обработан и принят в салоникских съездах и осуществлен самым жестоким образом и методами, считая это неопровержимой правдой.

В заключениях представлены основные результаты диссертации.



MELKONYAN EDUARD VOLODYA

PROBLEMS OF ARMENIAN NATIONAL LIBERATION MOVEMENT AND  
ARMENIAN GENOCIDE IN THE SCIENTIFIC LEGACY OF THE ACADEMICIAN  
M.NERSISYAN

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of  
“History of Armenia” 07.00.01.

The defense of the dissertation will be held on 30 September 2011, 14<sup>00</sup> in  
the Specialized Council № 004, operating at the Institute of History of National  
Academy of Sciences of RA (on the address Marshal Baghramyan Avenue 24/4).

SUMMARY

The Ph. thesis is dedicated to the well-known armendlogist academician M. Nersisyan's some scientific legacy problems' comprehensive analysing. The problems discussed are the Armenian national liberation movement and the Armenian Genocide.

The thesis contemporaneity, aim and tasks, scientific novelty and practical meaning, the research examination, the methodological basis and the level of subject being studied are given in the Introduction.

In the 1st chapter (“The Life and Activities of the Academician M. Nersisyan”) the life of the historian, full of difficulties of the time, critics and obstacles are described. We have also shortly analyzed his scientific works and estimated his role and place in Armendlogy.

The 2<sup>nd</sup> chapter is titled “M. Nersisyan's Scientific Historical Views on the Subject of Estimation of the Armenian National Liberation movement. Here we appraised the fact, that for the first time after decades of silence a valuable word about the western Armenians' hard conditions under the Turkish oppression and their heroic struggle was said in the academician's works. An important significance has his basic monograph, titled “The Liberation Struggle of the Armenians against Turkish Tyranny”, where based on researching analysis, with consistent purposefulness it is shown that the Armenian national liberation movement was not the cause but the effect of the pogrom policy of Turkey and

assumed, that the struggle of the western Armenians against the Ottoman Empire was just means of living and its basis was the liberation movement. The latter is not given isolated but parallels between Armenian and other people under Turkish oppression history are made and more clearly the patterns of liberation movement are introduced. According M. Nersisyan, the leading force of that movement were peasants and the progressive democratic intelligentsia. The pro-Russian orientation, which was substantiated and conforming in Armenian reality, remained unchangeable, during the whole period of that struggle. The Great Powers showed their negative attitude to the liberation movement. The false statements of history falsifiers concerning Armenian national liberation movement are denied and exposed in the academicians's studies.

In the 3<sup>rd</sup> chapter, "The Treatment of the Armenian Genocide in M. Nersisyan's Studies" it is grounded, that the roots of the Armenian tragedy goes back into centuries and come from the Ottoman sources. When speaking about the Armenian pogroms of the 1890s, M. Nersisyan also called that policy genocide.

The historian laid the basis of Armenian genocide investigations. A most valuable collection of documents, called "Armenian Genocide in the Ottoman Empire" with Nersisyan's foreword and edition, published in 1966 has its own place in the works dedicated to the Armenian tragedy. "The history Falsifiers" by M. Nersisyan has a great scientific and cognitive significance, and the factual basis of research included in "The Irrefutable documents on the Armenian Genocide" generalises the problem history. Using a lot of arguments the historian grounded, that the Armenian Genocide was organized and planned long before at the congress in Salonika and fulfilled in the most cruel way and methods, considering it the irrefutable truth. The basical results of the thesis are given in Conclusions.